ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/182

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն
Մասնակից՝ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ ոստիկանության ներկայացուցիչ՝ Գ. Մարտիրոսյանի,
«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Համբարյանի, Դ. Մամյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հուշանվեր հեռուստացույցի, հուշանվեր ժամացույցի և մեդալների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29-3»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.07.2021թ.-ի թիվ 26/26/10907-2021 գրությամբ «Իմպորտ

Թրեյդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 01.07.2021թ.-ի թիվ 3/27/42370-21 գրության հիման վրա, 06.07.2021թ.-ին «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.07.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձը 08.07.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/182 համարի ծածկագիրը:

15.07.2021թ.-ին, 23.07.2021թ.-ին և 30.07.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.07.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2021թ.-ին:

2. <u>ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ ոստիկանությունը 01.07.2021թ.-ի թիվ 3/27/42370-21 գրությամբ, դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը, հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ոստիկանության և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10 մարտի 2021թ.-ին կնքված թիվ ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԱ-29-3 ծածկագրով մեդալների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն սպանձնած պարտավորությունները չի կատարել:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք Ձեզ ձեռնարկել միջոցներ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրած 19.07.2021թ.-ի թիվ 27/868 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան այն հարցին, թե ինչու է «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի- տնօրեն Ա. Գասպարյանին գրություն ուղարկվել տնտեսական վարչության պետի անունից, հայտնում ենք, որ խնդրո առարկա հանդիսացող գնման առարկաների մասով պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ոստիկանության տնտեսական վարչությունը և կադրային քաղաքականության վարչությունը, և քանի որ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման կարգի 108-րդ կետի համաձայն պայմանագրի նախնական հսկողությունը իրականացնում է պատասխանատու ստորաբաժանումը, այդ իսկ պատճառով գրավոր իրազեկումները իրականացվել են պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի անունից, իսկ այն հարցին, թե ինչու հանձնման-ընդունման ակտերը և արձանագրությունները չեն վերադարձվել armeps համակարգի միջոցով, հայտնում ենք, որ կազմակերպության կողմից համապատասխան փաստաթղթերը ներկայացվել են նաև փաստաթղթային եղանակով ծրարավորված վիճակով, Հայփոստի միջոցով, այդ իսկ պատճառով մեր կողմից հետ է ուղարկվել հատուկ կապի միջոցով՝ ծրարի վրա նշված հասցեով, ինչպես նաև էլեկտրոնային փոստի միջոցով:»:

3. <u>«Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 08.07.2021թ.-ին գրությամբ դիմել է «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.07.2021թ.-ի թիվ 26/26/10907-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը 12.07.2021թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ ոստիկանությունը (այսուհետ՝ Պատվիրատու) հուշանվեր հեռուստացույցների, հուշանվեր ժամացույցների և մեդալների ձեռքբերման նպատակով 29.01.2021թ-ին հայտարարել է «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ):

10.03.2021թ հրավերի 7, 8 և 9 չափաբաժինների մասով Պատվիրատուի և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքվել է ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29-3 ծածկագրով պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

2021թ ապրիլ-մայիս ամիսների ընթացքում արտադրված մեդալների նմուշները բազմիցս ներկայացվել են Պատվիրատուին՝ համաձայնեցման նպատակով, որի արդյունքում վերջինիս կողմից ներկայացված դիտողությունները շտկվել են և Պատվիրատուի կողմից վերջնական հավանություն ստանալուց (որևէ առարկություն մեդալների հետ կապված չի ներկայացվել) հետո պայմանագրով սահմանված կարգով ապրանքները մատակարարվել են Պատվիրատուին:

31.05.2021թ. պայմանագրով սահմանված կարգով և ժամկետում մեր կողմից մատակարարվել է «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» I աստիճան մեդալ՝ 54 հատ և III աստիճան մեդալ՝ 81 հատ: Հիշյալ ապրանքների հանձնելու փաստը ֆիքսող փաստաթղթերը (հավելված N 2.1 ակտ) պայմանագրի 5.1 ենթակետով սահմանված կարգով 31.05.2021թ. առձեռն տրամադրվել են Պատվիրատուին: Այնուհետև, նույն ենթակետի սահմանված կարգով, էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 02.06.2021թ. կցվել են նաև հանձնման-ընդունման արձանագրությունները (հավելված N 2) և հաշիվ ապրանքագրերը՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ: (armeps համակարգից արտատպումները կցվում են):

03.06.2021թ. Վաճառողի կողմից մատակարարվել են նաև «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» II աստիճան մեդալ՝ 75 հատ: Հիշյալ ապրանքների հանձնելու փաստը ֆիքսող փաստաթղթերը (հավելված N 2.1) պայմանագրի 5.1 ենթակետով սահմանված կարգով 03.06.2021թ առձեռն տրամադրվել են Պատվիրատուին: Այնուհետև, նույն ենթակետի սահմանված կարգով, էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով 07.06.2021թ. կցվել են նաև հանձնման-ընդունման

արձանագրությունները (հավելված N 2) և հաշիվ ապրանքագրերը՝ հաստատված էլեկտրոնային ստորագրությամբ (armeps համակարգից արտատպումները կցվում են):

Հարկ է նշել, որ ՀՀ Կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման (այսուհետ՝ Կարգ) XVII գլխով և պայմանագրի 5-րդ կետով հստակ սահմանված է ապրանքների հանձնման և ընդունման կարգը: Մասնավորապես՝

ենթակետ 5.1՝ «Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին»:

ենթակետ 5.2 «Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը»:

ենթակետ 5.3 «Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխա-նատվության միջոցներ»:

Ենթակետ 5.4 «Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը»:

Վերը նշված կետերի վերլուծությունից հետևում է, որ Գնորդի և Վաճառողի միջև ապրանքների հանձման և ընդունման գործընթացի հետ կապված փաստաթղթաշրջանառությունը պետք է իրականացվի բացառապես էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով:

16.06.2021թ. մեր կողմից, փոստային առաքմամբ, Պատվիրատուին է ուղարկվել ծանուցում, առա այն, որ էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված N 1 և N 2 հանձնման-ընդունման արձանագրությունները և հաշիվ ապրանքագրերը մեր կողմից համապատասխանաբար՝ 02.06.2021թ և 07.06.2021թ տրամադրվել են էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, իսկ 10.06.2021թ և 15.06.2021թ. դրությամբ լրացել են պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետները, սակայն Գնորդը սահմանված կարգով չի ընդունել մատակարարված ապրանքը կամ չի մերժել դրա ընդունումը (գրությունը կցվում է): Ուստի, առաջնորդվելով Կարգի III գլխի 11-րդ կետի 3-րդ ենթակետի և պայմանագրի 5.4 կետով խնդրել ենք, էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով մեր ընկերությանը տրամադրել վերջինիս կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունները: Սույն գրության պատասխանն առ այսօր չենք ստացել:

29.06.2021թ. ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետ, ոստ. գնդապետ Ա. Ներսիսյանից ստացել ենք մեր ընկերությանը հասցեագրված գրություն (թիվ 27/728 ելքագրված 23.06.2021թ.), որի վերաբերյալ հարկ ենք համարում Ձեր ուշադրությունը հրավիրել հետևյալ հանգամանքներին.

✓ Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգի համաձայն, սույն գրության փոխարեն, Պատվիրատուն պարտավոր էր՝ պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում, էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով, Վաճառողին հետ վերադարձնել հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը, ինչը մինչև այսօր չի կատարել:

✓ Պայմանագրի համաձայն ՀՀ ոստիկանության անունից հանդես գալու լիազորություն ունի միայն ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստ. գնդապետ Վ. Մովսիսյանը, սակայն գրությունը ուղարկվել է վարչության պետ, ոստ. գնդապետ Ա. Ներսիսյանի ստորագրությամբ, որի Պատվիրատուի կողմից հանդես գալու լիազորությունները հավաստող որևէ փաստաթուղթ առկա չէ փաթեթում:

Ինչ վերաբերվում է հիշյալ գրությամբ ներկայացված փորձագիտական եզրակացությանը, ապա այն համարում ենք ոչ արժանահավատ հաշվի առնելով հետևյալը.

✓ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» II աստիճան 75 հատ մեդալները մեր կողմից մատակարարվել են 03.06.2021թ-ին, ժամը 15.00-ին մինչդեռ.

- ՀՀ ոստիկանության և ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի միջև նյութագիտական փորձաքննության անցկացման N 21-0077Պ պայմանագիրը կնքվել է՝ 02.06.2021թ.,

- թվով 3 փորձանմուշները (I, II, III աստիճան մեդալներից մեկական օրինակ), մեզ համար անհասկանալի կերպով, փորձագիտական բյուրոյին տրամադրվել են՝ 01.06.2021թ-ին (համաձայն՝ 03.06.2021թ. «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի տնօրենից ՀՀ ոստիկանության պետի տեղակալին ուղարկված գրության), այն դեպքում, երբ II աստիճանի մեդալները ուղղակի ֆիզիկապես առկա չէին Պատվիրատուի մոտ:

- փորձագիտական եզրակացությանը մեջ նշված է, որ թվով 3 փորձանմուշների փորձաքննությունը, մեզ համար անհասկանալի կերպով, սկսվել է՝ 02.06.2021թ. և ավարտվել 03.06.2021թ., նույն օրը ելքագրվել և գրությամբ տրամադրվել է ՀՀ ոստիկանությանը, այդ թվում 03.06.2021թ-ին, ժամը 15.00-ին մատակարարված խմբաքանակի:

✓ փորձամնուշները վերցվել են առանց մեզ ծանուցելու, առանց մեր ընկերության լիազոր անձի ներկայության, ներկայացված փաստաթղթերում առկա չեն նմուշառման արձանագրությունը, այդ պատճառով հայտնի չէ թե ով է կատարել նմուշառումը, նմուշառման գործընթացին ներկա են գտնվել ընթերականեր թե ոչ, պարզ չէ, թե արդյոք մեր կողմից մատակարարված մեդալներից են տրամադրված փորձանմուշները, ինչ մեթոդաբանությամբ է իրականացվել նմուշառումը և ինչ սկզբունքով է որոշվել ամբողջ խմբաքանակից վերցնել ընդամենը 3 հատ փորձանմուշներ վերցնելը:

✓ համացանցում հրապարակված հրապարակային տեղեկությունների համաձայն ՀՀ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը չունի նյութագիտական փորձաքննություն իրականացնելու հավաստագիր, հետևաբար նաև համապատասխան

ստանդարտացում և որակավորում անցած սարքեր և մասնագետներ (armnab.am կայքի արտապատումները կցվում են https://armnab.am/LaboratoryListN#):

Վերշ նշված փաստերի վերլուծությունից հետևում է, որ Պատվիրատուի կողմից չեն պահպանվել օրենսդրի կողմից հաստատված դրույթները, գրություններում առա են իրարամերժ ժամկետներ և տեղեկություններ, չեն պահպանվել փորձաքննությունների համար սահմանված պատշաճ ընթացակարգը:

30.06.2021թ. Պատվիրատուի կողմից ստացել ենք ծանուցում պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին, սակայն բողոքը քննող անձի կողմից մեզ տրամադրված փաստաթղթերի փաթեթում առկա է բացասական եզրակացություն, որում տրված եզրակացությունը վերաբերում է պայմանագրով սահմանված ողջ խմբաքանակին, մինչդեռ պայմանագրով նախատեսված է ապրանքների մատակարարումը երեք փուլերով, իսկ մեր ընկերության կողմից մատակարարվել է միայն պայմանագրով նախատեսված 1-ին խմբաքանակը: Ուստի, ակնհայտ է, որ Պատվիրատուն չէր կարող չմատակարարված ապրանքների որակի մասին տալ բացասական եզրակացություն: Հատկանշական է, որ տվյալ եզրակացությունը Պատվիրատուի կողմից չի տրամադրվել մեր ընկերությանը և այդ մասին մենք տեղեկացել ենք բողոքը քննող անձի կողմից մեզ տրամադրված փաստաթղթերի փաթեթը ուսումնասիրելիս: Հարկ է նշել նաև, որ հիշյալ եզրակացությունը կազմված է պայմանագրի 5-րդ կետի ժամկետների խախտմամբ և չի համապատասխանում ՀՀ ֆինանսների նախարարի կողմից հաստատված եզրակացության ձևաթղթին:

Հաշվի առնելով վերը նշված փաստերը պնդում ենք, որ Պատվիրատուի կողմից կատարված միակողմանի գործողությունները չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներից և վերջինս չուներ բավարար օրինական հիմքեր պայմանագիրը միակողմանի լուծելու համար, քանի որ մեր կողմից հանձնած ապրանքները Կարգով և պայմանագրով սահմանված կերպով համարվում են ընդունված, ուստի գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելը ոչ իրավաչափ է:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին ՀՀ ոստիկանության պահանջը մերժել:

Մասնակիցը 20.07.2021թ.-ին ներկայացրած դիքորոշման լրացմամբ հավելել է նաև հետևյալը.

«ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստ. գնդապետ Վ. Մովսիսյանի 19.07.2021թ N 27/868 գրության կապակցությամբ հայտնում եմ Ձեզ, որ

1. Ոչ ընթացակարգի հրավերով և ոչ էլ կնքված ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29-3 ծածկագրով պայմանագրում առակա չէ որևէ նշում այն մասին, որ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետը իրավունք ունի հանդես գալ ՀՀ ոստիկանության անունից սույն գործընթացի շրջանակներում, նման լիազորության առկայության մասին հավաստող փաստաթուղթ առկա չէ նաև «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի տնօրենին հասցեագրված ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետի՝ 23.06.2021թ. N 27/728 գրությանը կից, ուստի վերոգրյալից ակնհայտ է, որ ՀՀ ոստիկանության տնտեսական վարչության պետը լիազորություն չունի հանդես գալ ՀՀ ոստիկանության անունից սույն գործընթացի շրջանակներում:

2. Ինչ վերաբերում է էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը Գնորդի կողմից Վաճառողին չտրամադրելուն, ապա, հարկ ենք համարում կրկին նշել, որ ՀՀ Կառավարության 04.05.2017թ 526-Ն որոշման (այսուհետ՝ Կարգ) XVII գլխով, ընթացակարգի հրավերով և պայմանագրի 5-րդ կետով հստակ սահմանված է ապրանքների հանձնման և ընդունման կարգը, այն է՝ armeps համակարգի միջոցով, ուստի պայմանագրի կողմերը պարտավոր են առաջնորդվել միայն և բացառապես Կարգով, հրավերով և պայմանագրով սահմանված կարգերով: Ինչ վերաբերում է «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի կողմից փաստաթղթերը նաև թղթային եղանակով ներկայացնելուն, ապա պայմանագրի 5.1 ենթակետով հստակ գրված է.

«Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1՝ ընդունման ակտ), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին»:

Վերոնշյալ ենթակետը կարդալու դեպքում պարզ է դառնում, որ ընդունման ակտը (հավելված N 2.1) տրամադրվում է Գնորդին ոչ թե armeps համակարգի միջոցով, այլ՝ թղթային:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ ոստիկանության կողմից տվյալ գործընթացի շրջանակներում չեն պահպանվել ոչ գնումների մասին ՀՀ օրենսդրության, ոչ հրավերով և

ոչ էլ պայմանագրով սահմանված պարտադիր պահանջները, բայց, նույնիսկ, տվյալ ոչ սահմանված կարգով գործելու դեպքում էլ, չեն կատարվել պատշաճ ծանուցումներ, չեն պահպանվել հստակ ժամկետները և ոչ էլ գործողությունների հաջորդականությունը:»:

4. <u>ՍՑ-LO-2021/182 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ ոստիկանության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29-3» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճան մեդալ ապրանքատեսակի համար մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, 54 հատը 60 օրվա ընթացքում, 54 հատը 180 օրվա ընթացքում, 55 հատը 270 օրվա ընթացում, 55 հատը 350 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 20-ը, իսկ 2-րդ աստիճան մեդալ ապրանքատեսակի համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, 75 հատը 60 օրվա ընթացքում, 75 հատը 180 օրվա ընթացքում, 75 հատը 270 օրվա ընթացում, 75 հատը 350 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 20-ը:

Պատվիրատուն Մասնակցին ուղղված 04.06.2021թ.-ի թիվ 27/633 գրությամբ հայտնել է, որ 10.03.2021թ.-ին թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ29-3» ծածկագրով կնքված պայմանագրի շրջանակներում Մասնակցի կողմից 31.05.2021թ.-ին դուրս գրված հարկային հաշիվով՝ մատակարարվել է, ըստ պայմանագրի ժամանակացույցի թվով 54 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 1-ին աստիճան և թվով 81 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 3-րդ աստիճան

խմբաքանակների ապրանքները, ինչպես նաև Մասնակցի կողմից 03.06.2021թ.-ին դուրս գրված հարկային հաշվով՝ թվով 75 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 2-րդ աստիճան, ապրանքները չեն ընդունվում: Նշված մատակարարված ապրանքներից նմուշներ են ուղարկվել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ՝ ապրանքների տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը ստուգելու նպատակով, ինչի արդյունքում վերջինիս կողմից տրվել է եզրակացություն տեխ.բնութագրով պահանջվող պատրաստված նյութի անհամապատասխանության վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից Մասնակցին է վերադարձվել վերջինիս կողմից ուղարկված հանձնման-ընդունման արձանագրությունը, ընդունման ակտը, հարկային հաշիվները, ինչպես նաև առաջարկվել է 15 օրյա ժամկետում մատակարարված ապրանքները փոխարինել տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքներով:

Պատվիրատուն Մասնակցին ուղղված մեկ այլ՝ 23.06.2021թ.-ի թիվ 27/728 գրությամբ հայտնել է, որ Մասնակցի իրավաբանական հասցեին հատուկ կապի միջոցով ուղարկված գրությունները չեն ընդունվել: Միաժամանակ հայտնել են, որ 04.06.2021թ.-ին Մասնակցին տեղեկացրել են էլեկտրոնային փոստով: Ինչպես նաև հայտնել է, որ 10.03.2021թ.-ին թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ29-3» ծածկագրով կնքված պայմանագրի շրջանակներում Մասնակցի կողմից 31.05.2021թ.-ին դուրս գրված հարկային հաշվով՝ մատակարարվել է, ըստ պայմանագրի ժամանակացույցի թվով 54 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 1-ին աստիճան և թվով 81 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 3-րդ աստիճան խմբաքանակների ապրանքները, ինչպես նաև Մասնակցի կողմից 03.06.2021թ.-ին դուրս գրված հարկային հաշվով՝ թվով 75 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 2-րդ աստիճան, ապրանքները չեն ընդունվում: Նշված մատակարարված ապրանքներից նմուշներ են ուղարկվել ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ՝ ապրանքների տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը ստուգելու նպատակով, ինչի արդյունքում վերջինիս կողմից տրվել է եզրակացություն տեխ.բնութագրով պահանջվող պատրաստված նյութի անհամապատասխանության վերաբերյալ: Ելնելով վերոգրյալից Մասնակցին է վերադարձվել վերջինիս կողմից ուղարկված հանձնման-ընդունման արձանագրությունը, ընդունման ակտը, հարկային հաշիվները, 15 օրյա ժամկետում մատակարարված ապրանքները փոխարինել տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքներով:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 30.06.2021թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին 30.06.2021թ.-ի թիվ 27/762 ծանուցման համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10 մարտի 2021 թվին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈԻՇ/ՄԵԴԱԱ-29-3» ծածկագրով մեդալների գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ն ստանձնած պարտավորությունները չի կատարել: Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի: Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշմանն 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.8-րդ կետը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021 թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈԻՇ/ՄԵԴԱԼ-29-3» ծածկագրով Պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.07.2021թ.-ի թիվ 26/26/10907-2021 գրությամբ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները...:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար: Ապրանքի մատակարարման ժամանակացույցը սահմանված է սույն պայմանագրի N 2 հավելվածով:

Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճան մեդալ ապրանքատեսակի համար մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, 54 հատը 60 օրվա ընթացքում, 54 հատը 180 օրվա ընթացքում, 55 հատը 270 օրվա ընթացում, 55 հատը 350 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 20-ը, իսկ 2-րդ աստիճան մեդալ ապրանքատեսակի համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, 75 հատը 60 օրվա ընթացքում, 75 հատը 180 օրվա ընթացքում, 75 հատը 270 օրվա ընթացում, 75 հատը 350 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 20-ը:

Պայմանագրի 2.1.2 կետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով

պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ ոստիկանության և «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ի միջև 10.03.2021թ.-ին կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29-3» ծածկագրով պետական գնման պայմանագրի հավելված 1-ով «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» 1-ին աստիճան մեդալ ապրանքատեսակի համար մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, 54 հատը 60 օրվա ընթացքում, 54 հատը 180 օրվա ընթացքում, 55 հատը 270 օրվա ընթացում, 55 հատը 350 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 20-ը, իսկ 2-րդ

աստիճան մեդալ ապրանքատեսակի համար՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օր հետո, 75 հատը 60 օրվա ընթացքում, 75 հատը 180 օրվա ընթացքում, 75 հատը 270 օրվա ընթացում, 75 հատը 350 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2021թ. դեկտեմբերի 20-ը:

Մասնակցի կողմից 31.05.2021թ.-ին դուրս գրված հարկային հաշիվով՝ մատակարարվել է, ըստ պայմանագրի ժամանակացույցի թվով 54 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 1-ին աստիճան և թվով 81 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 3-րդ աստիճան խմբաքանակների ապրանքները, ինչպես նաև Մասնակցի կողմից 03.06.2021թ.-ին դուրս գրված հարկային հաշվով՝ թվով 75 հատ «Ոստիկանությունում երկարամյա ծառայության համար» մեդալ 2-րդ աստիճան, ապրանքները չեն ընդունվել՝ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից փորձագետի թիվ 21-077Պ համարի եզրակացության հիման վրա՝ ապրանքատեսակները չեն համապատասխանել Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին: Պատվիրատուն տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքատեսակների մատակարարման համար 04.06.2021թ.-ի թիվ 27/633 գրությամբ վերադարձրել է Մասնակցի կողմից ուղարկված հանձնման-ընդունման արձանագրությունը, ընդունման ակտը, հարկային հաշիվները և առաջարկել Մասնակցին 15 օրյա ժամկետում մատակարարված ապրանքները փոխարինել տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքներով: Գրությունն ուղարկվել է Մասնակցի իրավաբանական հասցեով, որը հետ է վերադարձվել: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ապրանքը չի մատակարարվել, ինչի արդյունքում Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7-րդ կետի «բ» պարբերությունը, միակողմանի լուծել է կնքված թիվ «ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՀՈՒՇ/ՄԵԴԱԼ-29-3» ծածկագրով Պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանիորեն լուծելու մասին ծանուցումներ» բաժնում, 30.06.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին 30.06.2021թ.-ի թիվ 27/762 ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն գործի փաստերով չի հիմնավորվում, որ Պատվիրատուի կողմից Մասնակցին ուղարկված 04.06.2021թ.-ի թիվ 27/633 գրությունը ուղարկվել է նաև փոստային առաքման ծառայության միջոցով և ապա ստացվել է: Պատվիրատուն ինչպես լիազորված մարմնին, այնպես էլ ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին չի ներկայացրել այդ փաստը հիմնավորող որևէ վերաբերելի ապացույց, այն դեպքում, երբ այդ փաստի հաշվառմամբ է հնարավոր

գնահատել, արձանագրել ու ապացուցված համարել Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների խախտման փաստը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ գործում առկա նյութերով, մասնավորապես՝ Պատվիրատուի Մասնակցին ուղղված մեկ այլ՝ 23.06.2021թ.-ի թիվ 27/728 գրությամբ հիմնավորվում է, որ Մասնակցի իրավաբանական հասցեին հատուկ կապի միջոցով ուղարկված գրությունները չեն ընդունվել: Հատկանշական է, որ պայմանագրում, գնանշման հարցման մասնակցելու դիմում-հայտարարությամբ Մասնակցի հասցե նշված է՝ ք. Երևան, Շրջանային 2/2, իսկ Պատվիրատուն 04.06.2021թ.-ի թիվ 27/633 գրությունն ուղարկել է ք. Երևան, Բաբաջանյան փ., 1-ին շ., բն. 15 հասցեով:

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.7-րդ կետի «բ» պարբերությամբ պայմանագրի միակողմանի լուծման համար փաստական հանգամանք է հանդիսացել Մասնակցի կողմից 31.05.2021թ.-ին և 03.06.2021թ.-ին մատակարարված ոչ պատշաճ ապրանքի ողջամիտ ժամկետում պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինելը, որի ժամկետի խախտման հիմքով Պատվիրատուն 30.06.2021թ.-ին միակողմանիորեն լուծել է կողմերի միջև կնքված պայմանագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.07.2021թ.-ի թիվ 26/26/10907-2021 գրությամբ «Իմպորտ Թրեյդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/182 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**